

**Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
ՔԱՀԱՆԱՅ ԶԵՌՆԱԴՐԵՑ
ՎԱՀԷ ՍԱՐԿԱԿԱԳ ՅՈՎՍԷՓԵԱՆԸ**

Պատմական օրեր ապրեցան Ռիչմոնտի (Վրժինիա) Ս. Յակոբ եկեղեցւոյ հաւատացեալները՝ երկրորդ անգամն ըլլալով ծուխին մէջ քահանայական ձեռնադրութիւն տեղի ունեցաւ: Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան քահանայ ձեռնադրեց Բրշ. Վահէ սրկ. Յովսէփ-



փեանը:

Շաբաթ Յունուար 19-ի երեկոյեան տեղի ունեցաւ Կոչման արարողութիւնը, իսկ ձեռնադրութիւնը՝ Կիրակի Յունուար 20-ին՝ Ս. Պատարագի ընթացքին: Երկու օրերն ալ Ս. Յակոբ եկեղեցի փութացած էին հոծ թիւով հաւատացեալներ, որոնց խանդավառութիւնը անսահման էր եւ երբ ձեռնադրութեան ընթացքին Սրբազան Հայր հարցուց թէ Վահէ սարկաւագ արժանի՞ է ձեռնադրութեան՝ բոլորը միաբերան կոչեցին. «Ան արժանի է»:

Քահանայական ձեռնադրութեան խարտաւիլակն էր Ս. Յակոբ եկեղեցւոյ նախկին հոգեւոր հովիւ եւ այժմու Ուաշինկթըն Տի.Սի.ի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ Արժշ. Տ. Յովսէփ քինյ. Կարապետեան: Ձեռնադրութեան կնքահայրն էր Արնըլտ Քորեսեան (Շիգակոյէն): Ներկայ էին նաեւ Արժշ. Տ. Ստեփանոս քինյ. Տուտուքեան, Արժշ.

Տ. Արսեն Ա. քինյ. Պարսամեան եւ Ս. Ներսէս Ընծայարանի ուսանողները: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց տեղւոյն դպրաց դասը՝ ղեկավարութեամբ խմբավար Խորէն Մէլիսանէճեանի:

Պատարագիչ եւ ձեռնադրող Սրբազան Հայրը՝ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան նորընծան վերանուանեց Տէր Մեսրոպ քահանայ, եւ իր յորդորականին մէջ ըսաւ. «Ձեռնադրութեան խորհուրդը մեզ կը կապէ մեր անցեալին, մեր դարաւոր արմատներուն, կը կապէ մեզ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի եւ Անոր աշակերտներուն: Եւ այսօր քահանայական ձեռնադրութեամբ նորընծային կը փոխանցենք սերունդէ սերունդ ժառանգուած հոգեւորականի հեղինակութիւնը: Տէր Մեսրոպ մէկ օղակն է Հայ Եկեղեցւոյ հոգեւոր սպասաւորներու կազմած մնայուն շղթային»:

Նորընծայ Տէր Մեսրոպ քահանայ իր խօսքին մէջ ըսաւ. «Իմ որդիական սէրս, հաւատարմութիւնս եւ գնահատանքս կը յայտնեմ իմ հոգեւոր հօրս՝ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանին: Իր օծումով եւ Ս. Միւռնի հրաշագործ ուժով ինծի փոխանցուեցաւ Ս. Հոգին: Շնորհակալութիւն կը յայտնեմ Սրբազան Հօր, որ առիթը ընծայեց ինծի իմ ուսումնական շարունակելու Միացեալ Նահանգաց մէջ եւ զիս արժանի նկատեց քահանայ ձեռնադրելու՝ որպէս զի ծառայեմ Արեւելեան թեմին մէջ:» Իսկ խօսքը ուղղելով Ս. Յակոբ Եկեղեցւոյ ծուխին՝ ըսաւ որ աղօթեն իրեն համար՝ որպէս զի ամենակարողն Աստուած աւելի զօրացնէ իր հաւատքը, ներշնչէ զինք եւ իմաստութիւն շնորհէ՝ որպէս զի համբերութեամբ եւ սիրով դիմագրաւէ բոլոր մարտահրաւերները:

«Շատ երկար ժամանակ պիտի յիշեմ այս շաբաթավերջը՝ որպէս անմոռանալի մէկ միջոցառումը իմ կեանքիս: Ես պատուուած կը զգամ կնքահայրը ըլլալու Տէր Մեսրոպի ձեռնադրութեան» ըսաւ կնքահայր տիար Քորէսեան, որ ծանօթացած էր Տէր Հօր երբ ան Շիգակոյի մէջ անգլերէն լեզուի դասընթացքներու կը հետեւէր: Այն օրերէն սկսեալ տէր եւ տիկին Քորէսեաններ իրենց ընտանիքի անդամը նկատած էին Տէր Հայրը:

Ներկայ հաւատացեալները, որոնցմէ շատեր առաջին անգամն է որ ներկայ կը գտնուէին քահանայի ձեռնադրութեան՝ հոգեպէս լիացան խորհուրդի ներգործութեամբ եւ արարողութեան ազդեցութեամբ:

Ս. Պատարագի աւարտին՝ ներկայ հաւատացեալները մօտենալով նորընծայ Տէր Մեսրոպ քահանային համբուրեցին անոր օծուած ձեռքերը:

Տ. ՄԵՍՐՈՊ ՔԶՆՅ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Տ. Մեսրոպ քինյ. Յովսէփեան ծնած է Երեւան 1976 թուականին: Սեւանի Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցը աւարտելէ ետք՝ իր ուսումը շարունակած է Էջմիածնի Գեորգեան Հոգեւոր Ճեմարանին մէջ եւ 1999 թուականին սարկաւագ ձեռնադրուած է Գերշ. Տ. Ոսկան արքեպս. Գալփաքեանի կողմէ: Շրջանաւարտ ըլլալէ ետք նշանակուած է քարտուղար «Էջմիածին» պաշտօնաթերթի գրասենեակին: Այս շրջանին ան

2008

ԷԶՄԻԱԾԻՆ

Ա 133

հետևած է Հայաստանի Ամերիկեան համալսարանի դասընթացքներուն: 2004 թուականին եկած է Միացեալ Նահանգաց Արեւելեան թեմը իր ուսումը շարունակելու եւ իր ծառայութիւնը ի սպաս դնելու Արեւելեան թեմէն ներս: Անգլերէն լեզուի դասընթացքներու հետևած է Շիգակոյի Նորթ Փարք համալսարանին մէջ, ինչպէս նաեւ դասընթացքներու հետևած է Ս. Ներսէս Ընծայարանի, Ս. Վլատիմիր Ընծայարանի եւ Ճէնէրալ Թէօլոճիգըլ Դպրեմանքին մէջ: Պատասխանատու նշանակուած է Պրուքլինի «Միշըն» ծուխին եւ կրօնք դասաւանդած է Կիրականօրեայ Վարժարանին մէջ: 2006 թ. ընթացքին ան աւարտած է հիւանդանոցային հովուական ծառայութեան շրջանը եւ նշանակուած է օգնական հովիւ Ուայթ Փլէյնզի (Նիւ Եորք) Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ: Նոյն շրջանին լման ժամանակով ան հետևած է Ֆորտհըմ Համալսարանի դասընթացքներուն եւ ստացած մագիստրոսի աստիճան: 2005 թուականին ամուսնացած է Ռուզան Կարապետեանի հետ:

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎԵԼԵԱՆ ԹԵՄԻ